ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2015թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ (ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ) «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2797-րդ տարեդարձի առթիվ, սպորտի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի և միջազգային մրցասպարեզներում ունեցած ակնառու հաջողությունների համար պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, աշխարհի բազմակի չեմպիոն Արթուր Աբրահամին (Ավետիք Գրիգորի Աբրահամյան) շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ (ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ) «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արթուր Աբրահամը /Ավետիք Գրիգորի Աբրահամյան/ ծնվել է 1980թ. փետրվարի 20-ին, Երևանում:

1995 թվականին տեղափոխվում է Գերմանիայի Բամբերգ քաղաք: Նախ այնտեղ, ապա Նյուրնբերգում զբաղվել է սիրողական բռնցքամարտով:

1997 թվականին դառնում է Գերմանիայի սիրողական բռնցքամարտի պատանիների չեմպիոն: 1999 թվականին վերադառնալով Հայաստան՝ դառնում է ՀՀ երիտասարդ բռնցքամարտիկների չեմպիոն, որին զուգահեռ անց է կացնում իր պարտադիր զինվորական ծառայությունը հայոց բանակում: Այնուհետև ստանում է բարձրագույն իրավաբանական կրթություն Քըրք Քըրքորյանի անվան համալսարանում:

2003 թվականին վերադառնում է Գերմանիա և սկսում իր պրոֆեսիոնալ կարիերան:

2004 թվականից բնակվում է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում: 2005 թվականից ունի նաև Գերմանիայի քաղաքացիություն:

Մարզական կարիերայի ընթացքում ունեցել է 48 մենամարտ, որոնցից 44-ում հաղթել է՝ համաշխարհային դասակարգման աղյուսակներում գրավելով առաջատար հորիզոնականներ: Վեց տարի /2006, 2007, 2008, 2009, 2012, 2014/ Արթուր Աբրահամը ճանաչվել է Գերմանիայի լավագույն բռնցքամարտիկ:

2005 թվականի դեկտեմբերի 10-ին Լայպցիգում կայացած մենամարտից հետո, 5-րդ ռաունդում հակառակորդին նոկաուտի ենթարկելով, Արթուր Աբրահամը նվաճել է IBF վարկածով միջին քաշային աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Արթուր Աբրահամը Հայաստանի զինված ուժերի «Անդրանիկ Օզանյան» շքանշանակիր է:

2011 թվականին պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով, 2013 թվականին՝ ՀՀ սփյուռքի նախարարության «Պողոս Նուբար» մեդալով, 2014 թվականին՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի շնորհակալագրով:

Ելնելով վերգրյալից և հաշվի առնելով Արթուր Աբրահամի /Ավետիք Գրիգորի Աբրահամյան/ ներդրած ավանդը սպորտի զարգացման գործում, ինչպես նաև միջազգային մրցասպարեզներում ունեցած ակնառու հաջողությունները՝ առաջարկվում է Արթուր Աբրահամին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ (ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ) «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արթուր Աբրահամին (Ավետիք Գրիգորի Աբրահամյան) «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ (ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ) «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արթուր Աբրահամին (Ավետիք Գրիգորի Աբրահամյան) «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ